ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«17» ,Հունվարի 2020թ.-ի N 1-Ն

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Գեղարքունիք համայնքի 2020թ.-ի բյուջեն.
   ա. Եկամուտների գծով `-- 52232.8 հազար դրամ
   բ. Ծախսերի գծով ` -- 55239.2 հազար դրամ
   գ. Դեֆիցիտը` - 3007.1 հազար դրամ
   դ. Համայնքի վարչական բյուջեի եկամտային մասից ձևավորել պահուստային ֆոնդ 10440.0 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտը՝ համաձայն հատված 4:
6. Հաստատել ամայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն՝ հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրը՝ վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը – 3007.1 հազար դրամ
9. Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը ուղղել ֆոնդային բյուջե
   ա. Համայնքի ֆուտբոլի դաշտի ցանկապատի կառուցման աշխատանքները ֆինանսավորելու համար՝ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09բաժնի 2 խմբի 2դասի, բյուջետային ծախսերի տնտսագիտական դասակարգման 5112 հոդվածով սահմանել - 3007.1 հազ. դրամ
10. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումը՝4907.9 հազար դրամը , ուղղել
    ա. Համայնքի ֆուտբոլի դաշտի ցանկապատի կառուցման աշխատանքները ֆինանսավորելու համար՝ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 09բաժնի 2 խմբի 2դասի, բյուջետային ծախսերի տնտսագիտական դասակարգման 5112 հոդվածով սահմանել - 407.9 հազ. դրամ
    բ.Համայնքի Վ.Սարգսյանի փողոցի ասֆալտապատման աշխատանքները ֆինանսավորելու համար՝ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04բաժնի 5 խմբի 1դասի,

բյուջետային ծախսերի տնտսագիտական դասակարգման 5112 հոդվածով սահմանել - 4000.0 հազ. դրամ

գ. Համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգման և ձյան մաքրման աշխատանքները ֆինանսավորելու համար՝ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 04բաժնի 5 խմբի 1դասի, բյուջետային ծախսերի տնտսագիտական դասակարգման 5112 հոդվածով սահմանել - 500.0 հազ. դրամ

10. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի հոդված 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝

ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար նախատեսված ընդհանուր գումարի 5%-ը:

Ավագանի՝

4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

Ավագանու անդամներ՝ Աստրյան Վանիկ Ն.

Կարապետյան Զավեն Ա.

Հակոբյան Արմեն Կ.

Միրիբյան Մարտին Ռ.

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան

Կ.Տ